ոչ ոք իշխէր խօսել ինչ զայսմանէ, զի մի՛ բամբասեսցին իբրեւ զկաշառառուս, զի եթէ 'ի հաճոյս Հայոց խօսէին՝ Յոյնք բամբասէին, և եթէ Յունաց՝ Հայք. և այնպէս մնայր գործն անկատար. զայս ամենայն Փոխանորդ Պօղոս վարդապետն գրեալ ծանոյց յԵրուսաղէմ 'ի բանից Ամիրայից, և պատուէր սաստիկ՝ լինիլ նոցա խորհրդապահ, և չհանել երբէք զբանն 'ի վեր մինչ ցվախճան գործոյն, զուցէ Յոյնք պատրաստեսցեն զնիւթ կռուոյ եւ առիթ լիցին խռովութեան, և կամ յայտնապէս զրկեսցեն 'ի սովորական արարողութենէ մերմէ. մի և մի իւիք տայցէք պատճառս 'ի կողմանէ ձերմէ, որպէս չետուք մինչև ցարդ, զի ինքեանք անկան 'ի գուբն զոր փորեցին. զի դատաստան Արքայի արդարութեամբ է, ուրեմն մեք մեզէն մի՛ լիցուք վրէժխնդիր, եւ երեւեսցուք պարտաւոր առաջի Տէրութեան և գայթակղեցուսցուք զնա, այլ յամենայնի խնամով վարիլ ընդ Յոյնս, զի մի առիթ առեալ զիրաւունս մեր՝ յայլ եղանակ ամբաստանեսցեն զմեզ և պարտաւորեսցեն, և այլ սոցին նման բանք։

Եւ յետ այնորիկ մատուցին Հայք զերկուս գիրս աղաչանաց, մին առ Դենպետն մեծ, և երկրորդն առ Տեղապահն (Գայմագամ), և խնդրեցին զՀրովարտակն՝ որպէս հրամայեալ էր Արքայի։ Եւ 'ի վերայ այսր կազմեցաւ ժողով մեծ քան զառաջինն 'ի Դուռն Դենպետին ('ի 25 Ապրիլի). գնացին անդ ամենայն գլխաւորք Հայոց, եկին և Յոյնք բազմութեամբ մեծաւ, ընդ որս էին Պատրիարքն Երուսաղէմի եւ երեւելի Պոյարք, որք յայլում նուագի չէին եկեալ 'ի ժողովն։ Եւ իբրեւ հրաւիրեցան յԱտեան Դատաւորաց՝ Յոյնք խնդրեցին բազմութեամբ մտանել, որ յայլում պահու չէին համարձակեալ, եւ ըստ ներելոյ Ատենին՝ մտին յերկաքանչիւր կողմանց 15 ոգիք, ընթերցան դարձեալ յականջս նոցա ըստ առաջնոյն զիլման եւ զՀրաման Արքային. Դատաւորք ասեն՝ ահա լուայք զՀրաման Արքայի, ուրեմն՝ ըստ բարեհաճ կամաց Նորին մեծութեան՝ պարտիք առնուլ հրովարտակ, խաղաղիլ և օրհնել զԱրքայն։ Խոնարհեցան Հայք եւ գոհութեամբ շնորհս մատուցին և օրհնեցին զԱրքայ։ Իսկ Յոյնք լռեալ դադարեցին և ոչ օրհնեցին, ապա ասեն՝ ազգն մեր ոչ